Որպիսի եւ է կնքաւոր թուղթ թագաւորին՝ *Սիգել* կոչի ’ի մերոցս. եւ նշանակէ կնիք՝ ըստ լատին բառի (Sigillum): Ի լատին հրովարտակս եւ ’ի թուղթս, քանզի չունիմք հայերէն բնագիրս, յորժամ առ օտարս էին ուղղեալք՝ գրէր «**Լեւոն** շնորհօքն Աստուծոյ *Թագաւոր Հայոց, որդի Ստեփանէի, ’ի հզօր ազգէ Ռուբինեանց*». (այսպէս առ Գենուացիս, Վենետկեցիս[107], եւ այլն). իսկ յորժամ առ Քահանայապետն Հռովմայ գրէր եւ առ կայսր, յաւելոյր ընդ աստուածայնոյն եւ *հռոմէական կայսեր* շնորհօքն. Et (per) Romani imperii gratiam. բայց ’ի յետին ամս երեւի դադարեցուցեալ զյիշատակ կայսեր, զոր եւ ոչ ոք ’ի յաջորդացն գրէ. քանզի այնուհետեւ ’ի հարց յորդիս անցանէր ժառանգութիւնն, եւ ոչ ումեք օտարի լինէր լիճ կամ արգադիր:– Ճշգրտագոյն եւս՝ տեսաք ’ի հրովարտակս եւ ’ի պարգեւագիրս յաջորդացն Լեւոնի, զբիւզանդական կայսերաց ոճ վերտառութեան, գրեալ **Ա. Ա. Հաւատարիմ ’ի Քրիստոս** Թագաւոր Հայոց. որպէս ’ի Հեթմոյն (յէջ 207), ’ի Դ Լեւոնի (յէջ 363), եւ ’ի հաւու նորա Բ Լեւոնի (յէջ 387), որ փոխանակ *հաւատացեալ* բառի՝ վարէ *զՃշմարիտ* ծառայ Աստուծոյ. եւ անվրէպ յարի՝ *շնորհօք* եւ *ողորմութեամբ նորին*:– Յետինքդ յաւելուն զշուք իշխանութեան իւրեանց՝ գրելով զինքեանս «Թագաւոր **ամենայն** Հայոց»: Այս պանծալի հանրական կոչումն (*Ամենայն*) միայն ’ի խորագրի առաջնոյ թղթոյ մերոյս Լեւոնի առ Պապն գտանի, եւ ոչ բնաւ յայլ թուղթսն կամ ’ի պարգեւագիրս. արժանի դիտման եւ քննութեան է այդ[108]: Իսկ ’ի

---

[107] *Leo Dei gratia Rex Armeniorum, filius Stephani, et de potenti genere Rupinorum; կամ,* օս: *Leo, filius Stephani, de potenti genere Rupinorum, Dei gratia Rex Armeniorum.*

[108] Առ թագաւորութեամբ Լեւոնի՝ մեծ մասն ազգիս մերոյ ընդ իշխանութեամբ էր Սելչուկեանց եւ Վրաց՝ ’ի Մեծ Հայս, ’ի Փոքրն՝ ընդ սուլտանօք Իկոնիոնի, Սեբաստիոյ, Կարնոյ, եւ այլն. յորոց վերայ չունէր ինչ տէրութիւն թագաւորն Սիսուանայ. յետ նորա՝ հզօրագոյն տէրութիւն Թաթարաց գրեաթէ նուաճեաց, հանդերձ այլովք, զամենայն Հայս, եւ նաեւ զՍիսուան. ապա թագաւորք սորին չունէին իրաւունս կոչելոյ *Ամենայն Հայոց,* բայց եթէ այնու մտօք՝ զի ոչ գոյր այլ ուրեք թագաւոր Հայ՝ բաց յինքեանց, կամ զի թերեւս այնու պատուական անուամբ յիշեալք լինէին յաղօթս եկեղեցւոյ՝ զոյգ ընդ կաթողիկոսին ամենայն Հայոց: Սակայն անկ է հաւանել, եթէ Լեւոն եւ յաջորդք իւր՝ ոչ լոկ Հայոց Կիլիկեան մարզից ճանաչէին իսկապէս թագաւորք, այլ եւ մերձաւորացն որք ’ի զանազան վիճակս արեւմտեան իշխանաց երկրին Ասորւոց եւ որք ’ի Կիպրոս. զորոց բնակիչս տեսանեմք ’ի յիշատակարանս գրոց՝ սերտագոյն իմն *մեր* կոչել զթագաւորս Սսոյ, կամ բացարձակապէս՝ զ*թագաւորն Հայոց*:– Ըստ այսմ տեսութեան՝ գլխաւոր կենդրոնք կամ գաղթականք Հայոց՝ յորս փայլէին շառաւեղք թագին Սիսուանայ, են Ա. ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻՔ, որոց բարգաւաճանք յերկրի անդ սրբում՝ կանխէ սակաւուք քան զգալուստ Ա Խաչակրաց, առ Գրիգորիւ մեծաւ Վկայասիրաւ: Զատ ’ի մերայոցս գրչաց՝ յիշեն զնոսա յաճախ եւ արեւմտեայք, եւ Ասսիզքն Երուսաղեմի, եւ ցուցանեն